22.06.2026 թ. «ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ
ՏԱՐԵԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ՕՐԱԿԱՐԳԻ 4-9 ՀԱՐՑԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ 4. «ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ Խորհրդի անդամների ընտրության և քանակական կազմը հաստատելու մասին

Առաջարկություններ Խորհրդի անդամների թեկնածուների և Խորհրդի քանակական կազմի վերաբերյալ

Բանկի 25.05.2026 թ. Խորհրդի որոշման համաձայն, Բանկի բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովին ներկայացվում են Խորհրդի անդամների ընտրության վերաբերյալ հետևյալ առաջարկությունները՝

- Խորհրդի քանակական կազմը սահմանել յոթ հոգի,
- վերընտրել Խորհրդի անդամներ Գագիկ Զաքարյանին, Գեորգի Պիսկովին, Վարդան Աթայանին, Ֆիլիպ Ռենե Մարկ Դելմոտտին (անկախ), Ռուբեն Ինջիկյանին (անկախ), Կարինե Մինասյանին (անկախ),
- ընդգրկել Արթուր Նախշիկյանին Խորհրդի անդամության թեկնածուների ցանկում որպես անկախ անդամ՝ 22.06.2026 թ.-ից մինչև 30.06.2027 թ. պաշտոնավարման ժամկետով,
- հաստատել Խորհրդի հետևյալ կազմը՝ Գագիկ Զաքարյան, Գեորգի Պիսկով, Վարդան Աթայան, Ֆիլիպ Ռենե Մարկ Դելմոտտ (անկախ), Ռուբեն Ինջիկյան (անկախ), Կարինե Մինասյան (անկախ), Արթուր Նախշիկյան (անկախ):

Գագիկ Զաքարյան, Գեորգի Պիսկով՝ «ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ բաժնետեր «Uniholding GG Limited» ընկերության (սովորական բաժնետոմսերի քանակ՝ 155.532.640 հատ, արտոնյալ հաստատագրված բաժնետոմսերի քանակ՝ 32.010.000 հատ):
Գագիկ Զաքարյան՝ Բանկի բաժնետեր (սովորական բաժնետոմսերի քանակ՝ 1.524.493 հատ):
Վարդան Աթայան՝ հանդիսանում է Բանկի բաժնետեր (սովորական բաժնետոմսերի քանակ՝ 5.483 հատ):
Ֆիլիպ Ռենե Մարկ Դելմոտտ՝ Բանկի բաժնետեր չի հանդիսանում:
Ռուբեն Ինջիկյան՝ Բանկի բաժնետեր չի հանդիսանում:
Կարինե Մինասյան՝ Բանկի բաժնետեր չի հանդիսանում:
Արթուր Նախշիկյան՝ Բանկի բաժնետեր չի հանդիսանում:

Խորհրդի անդամների թեկնածուների կենսագրական տվյալներ

Գագիկ Տիգրանի Զաքարյան
Ծննդյան տարեթիվը՝ 09.04.1965 թ.
Կրթությունը
2003-2004 թթ.՝ Մոսկվայի միջազգային ֆինանսաբանկային դպրոց, պրոֆեսիոնալ թրեյդերի վկայական
1982-1988 թթ.՝ ՄԱԻ, բարձրագույն կրթություն, ինքնաթիռաշինություն
Աշխատանքային գործունեությունը վերջին 10 տարվա ընթացքում
2008 թ.-ից առ այսօր՝ «Ռեգո Ինշուրանս» ԱՓԲԸ (ՀՀ), Տնօրենների խորհրդի նախագահ
14.09.2001 թ.-ից առ այսօր՝ «ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ (ՀՀ), համահիմնադիր, Խորհրդի նախագահ

Վերընտրվել է Խորհրդի կազմում՝ 24 անգամ

Գեորգի Իգորի Պիսկով
Ծննդյան տարեթիվը՝ 31.10.1963 թ.
Կրթությունը
2005 թ.-ին ավարտել է Գ. Վ. Պլեխանովի անվան Ռուսաստանի տնտեսագիտական ակադեմիան, տնտեսագիտական գիտությունների թեկնածու
2000 թ.-ին ավարտել է Ներդրումային կառավարման և հետազոտությունների ինստիտուտը, Մեծ Բրիտանիա, «Ներդրումների կառավարում» վկայագիր
1987 թ.-ին ավարտել է ՄԱԻ, ինժեներ - սիստեմատեխնիկ
Աշխատանքային գործունեությունը վերջին 10 տարվա ընթացքում
2014 թ.-ից առ այսօր՝ «MoneyTO» ՍՊԸ, հիմնադիր
14.10.2004 թ.-ից առ այսօր՝«ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ (ՀՀ), համահիմնադիր, Խորհրդի անդամ

Վերընտրվել է Խորհրդի կազմում՝ 21 անգամ

<u>Վարդան Գրենայի Աթայան</u>
Ծննդյան տարեթիվը՝ 05.05.1969 թ.
Կրթությունը
1995 թ.-ին ավարտել է Վիեննայի Միացյալ Ինստիտուտը (շուկայական տնտեսության և ֆինանսական վերլուծության դասընթաց)
1990 թ.-ին ավարտել է Երևանի Ժողովրդական տնտեսության ինստիտուտը
Աշխատանքային գործունեությունը վերջին 10 տարվա ընթացքում
20.06.2018 թ.-ից առ այսօր՝ «ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ (ՀՀ), Խորհրդի անդամ
2017-2018 թթ.՝ «ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ (ՀՀ), Խորհրդի նախագահի խորհրդական
2001-2017 թթ.՝ «ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ (ՀՀ), Վարչության նախագահ

Վերընտրվել է Խորհրդի կազմում՝ 7 անգամ

<u>Ֆիլիպ Ռենե Մարկ Դելմոտտ</u>
Ծննդյան տարեթիվը՝ 15.05.1967 թ.
Կրթությունը
1991-1992 թթ.՝ Սեն-Սիր Ռազմական ակադեմիա, լեյտենանտ
1988-1990 թթ.՝ Միդլսեքս համալսարան, BA, բիզնեսի եվրոպական կառավարում
1986-1988 թթ.՝ NEOMA բիզնես դպրոց, բիզնեսի եվրոպական կառավարում
Աշխատանքային գործունեությունը վերջին 10 տարվա ընթացքում՝
2024 թ.-ից առ այսօր՝ Aix-en-Provence վերաքննիչ դատարան, դատական փորձագետ ֆինանսների գծով
10.11.2022 թ.-ից առ այսօր՝ «ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ (ՀՀ), Խորհրդի անդամ
2016 թ.-ից առ այսօր՝ «POD Consulting» ընկերություն, հիմնադիր և գործադիր տնօրեն

Վերընտրվել է Խորհրդի կազմում՝ 3 անգամ

<u>Ռուբեն Հովհաննեսի Ինջիկյան</u>
Ծննդյան տարեթիվը՝ 13.02.1951 թ.
Կրթությունը
1975-1978 թթ.՝ Համաշխարհային տնտեսության և միջազգային հարաբերությունների ինստիտուտ: 1979թ-ին պաշտպանել է ատենախոսություն և ստացել է տնտեսագիտական գիտությունների թեկնածուի աստիճան: Ատենախոսության թեման՝ OPEC-ի դերը համաշխարհային կապիտալիստական տնտեսությունում: 1983 թ.-ին «Միջազգային հարաբերություններ» հրատարակչության կողմից հրատարակված նույնանուն գրքի հեղինակ:
1968-1973 թթ.՝ Մոսկվայի միջազգային հարաբերությունների պետական ինստիտուտ (ՄՄՀՊԻ), միջազգային տնտեսագիտական հարաբերություններ մասնագիտությամբ մագիստրոսի աստիճան, արտաքին առևտրի գծով տնտեսագետի որակավորում
Աշխատանքային գործունեությունը վերջին 10 տարվա ընթացքում՝
22.05.2023 թ.-ից առ այսօր՝«ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ (ՀՀ), Խորհրդի անդամ
2013 թ.-ից առ այսօր՝ Վեբսթերի համալսարան (Webster University Geneva Campus, մայր համալսարան՝ Webster University, St Louis, Missouri), տնտեսագիտության և կառավարման պրոֆեսոր, ադյունկտ-պրոֆեսոր, կարդում է դասախոսություններ էներգետիկայի, հումքի, առևտրի ֆինանսավորման, թվային տնտեսագիտության մասին
2011 թ.-ից առ այսօր՝ միջազգային խորհրդատու, սպիկեր, մոդերատոր, նեթվորքեր (Շվեյցարիա)

Վերընտրվել է Խորհրդի կազմում՝ 2 անգամ

<u>Կարինե Աղասու Մինասյան</u>
Ծննդյան տարեթիվը՝ 29.08.1965 թ.
Կրթությունը
1982-1987 թթ.՝ Մոսկվայի Ս. Օրջոնիկիձեի անվան կառավարման ինստիտուտ, ինժեներ-տնտեսագետ, մեքենաշինական արդյունաբերության կառավարման կազմակերպող
Որակավորման բարձրացման տարբեր դասընթացներ, Գ.Պ. Շեդրովիցկու մեթոդաբանական շարժման մասնակից
Աշխատանքային գործունեությունը վերջին 10 տարվա ընթացքում՝
2026 թ. փետրվարից առ այսօր ՝ <Լիգա-Արմենիա> ԱՓԲԸ, Վարչության անդամ
01.12.2023 թ.-ից առ այսօր՝ «ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ (ՀՀ), Խորհրդի անդամ
2021-2026 թթ. փետրվար՝ <Լիգա-Արմենիա> ԱՓԲԸ, Խորհրդի անդամ
2020 թ.-ից առ այսօր՝ Ռուս-Հայկական համալսարանի դասախոս, ինտեգրման ինստիտուցիոնալ հիմքեր, ինստիտուցիոնալ տնտեսագիտության հիմքեր
2016-2019 թթ.՝ Կոլեգիայի անդամ (նախարար) ներքին շուկաների, տեղեկատվայնացման և տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաների գծով / Եվրասիական տնտեսական հանձնաժողով (միջազգային կազմակերպություն), Միության թվային

փոխակերպություն, ինֆորմատիզացում, ԵԱՏՄ-ի անդրսահմանային շուկաներում խոչընդոտների վերացում

Վերընտրվել է Խորհրդի կազմում՝ 2 անգամ

<u>Արթուր Սերյոժայի Նախշիկյան</u>
Ծննդյան տարեթիվը՝ 23.07.1975 թ.
Կրթությունը՝

1992-1997 թթ.՝ Երևանի ժողովրդական տնտեսության ինստիտուտ՝ «Տնտեսագիտություն» մասնագիտացմամբ

Վերապատրաստումներ՝

2025 թ. հոկտեմբեր՝ Արժույթի միջազգային հիմնադրամի (IMF) Ակադեմիա, զեղծարարության ռիսկերի կառավարման ոլորտում:
2025 թ. հուլիս՝ Ռիսկերի Կառավարման Ինստիտուտ, գործառնական ռիսկերի կառավարման ոլորտում
2019 թ. մարտ՝ Հարվարդի բիզնեսի դպրոց, բանակցությունների վարման հմտություններ
2018 թ. մարտ՝ Հարվարդի բիզնեսի դպրոց, փոխակերպվող ռազմավարություն

Մասնակցել է միջազգային բարձր մակարդակի համաժողովների, տարեկան հանդիպումների, գործադիր ֆորումների և մասնագիտացված սեմինարների՝ կազմակերպված Արժույթի միջազգային հիմնադրամի, Համաշխարհային բանկի, ինչպես նաև այլ առաջատար միջազգային ֆինանսական հաստատությունների կողմից՝ դրամավարկային քաղաքականության, պահուստների կառավարման, ռիսկերի կառավարման և մակրոտնտեսական վերլուծության թեմաներով:

Աշխատանքային գործունեությունը վերջին 10 տարիների ընթացքում
2025 թ. ապրիլից առ այսօր՝ գործառնական ռիսկերի կառավարման գծով տնօրեն, Սևծովյան առևտրի և զարգացման բանկ (Սալոնիկներ, Հունաստան)
2024 թ. փետրվար – 2025 թ. ապրիլ՝ արտաքին կապերի և հաղորդակցության գծով տնօրենի պաշտոնակատար, Սևծովյան առևտրի և զարգացման բանկ (Սալոնիկներ, Հունաստան)
2020-2024 թթ.՝ ռիսկերի կառավարման դեպարտամենտի ավագ մասնագետ, Սևծովյան առևտրի և զարգացման բանկ (Սալոնիկներ, Հունաստան)
2016-2020 թթ.՝ կառավարման հանձնաժողովի ավագ խորհրդական, Սևծովյան առևտրի և զարգացման բանկ (Սալոնիկներ, Հունաստան)
2005-2016 թթ.՝ ֆինանսական դեպարտամենտի տնօրեն, ՀՀ Կենտրոնական բանկ
Մասնագիտական անդամակցություններ
2024 թ. առ այսօր՝ Խորհրդի անդամ, Հայաստանի Կենտրոնական Դեպոզիտարիա
2020-2024 թթ.՝ Անկախ խորհրդի անդամ, Հայաստանի Ֆոնդային Բորսա և Կենտրոնական Դեպոզիտարիա
2001 թ. առ այսօր՝ Խորհրդի անդամ, Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոն ՀԿ

ՀԱՐՑ 5. «ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ 2025 թ. ֆինանսական արդյունքներով տարեկան շահութաբաժինների վճարման վերաբերյալ որոշում ընդունելու մասին

Առաջարկություն շահույթի բաշխման վերաբերյալ

Հաշվի առնելով Բանկի 2025 թ. ֆինանսական գործունեության արդյունքները և «Շահութաբաժինների վճարման քաղաքականությամբ» սահմանված դրույթները՝ Բանկի Խորհրդի 25.05.2026 թ. որոշմամբ ընդհանուր ժողովին առաջարկվում է՝

- Բանկի կուտակված շահույթից սովորական անվանական բաժնետոմսերով վճարել տարեկան շահութաբաժիններ դրամով՝ 9.325.724.971 ՀՀ դրամ ընդհանուր գումարի չափով,
- տարեկան շահութաբաժինների վճարումն իրականացնել 23.06.2026 թ.-ից մինչև 30.06.2026 թ. ընկած ժամանակահատվածում սովորական անվանական բաժնետոմսերի սեփականատերերին, որոնք ընդգրկվել են Բանկի բաժնետերերի ռեեստրում՝ Բանկի բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու օրվա դրությամբ,
- պահուստային հիմնադրամին հատկացնել Բանկի 2025 թ. զուտ շահույթի 5% - ը:

ՀԱՐՑ 6. «ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ «Շահութաբաժինների վճարման քաղաքականությունը» ուժը կորցրած ճանաչելու և կիրառությունից հանելու մասին

Խորհրդի 25.05.2026 թ. որոշմամբ առաջարկվում է ուժը կորցրած ճանաչել և կիրառությունից հանել 06.05.2024 թ. բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ 16.01.7 կոդավորմամբ հաստատված «Շահութաբաժինների վճարման քաղաքականությունը»՝ այն Կորպորատիվ կառավարման կանոնագրքի և միջազգային փորձի պահանջներին համապատասխանեցնելու անհրաժեշտությունից ելնելով:

ՀԱՐՑ 7. «ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ «Շահութաբաժինների վճարման քաղաքականության» հաստատման, փոփոխման և լրացման վերաբերյալ որոշումների ընդունման լիազորությունը Բանկի Խորհրդին փոխանցելու մասին

Առաջնորդվելով Կորպորատիվ կառավարման կանոնագրքի և միջազգային փորձի պահանջներով՝ խորհրդի 25.05.2026 թ. որոշմամբ առաջարկվում է «Շահութաբաժինների վճարման քաղաքականության» հաստատման, փոփոխման և լրացման վերաբերյալ որոշումների ընդունման լիազորությունը փոխանցել Բանկի Խորհրդին:

ՀԱՐՑ 8. «ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ «Բաժնետերերի ընդհանուր ժողովի նախապատրաստման և վարման կանոնակարգը» 2-րդ խմբագրությամբ՝ REG 01.2 կոդավորմամբ հաստատելու մասին

Հիմք ընդունելով Բանկի ներքին իրավական ակտերը առնվազն տարին մեկ անգամ վերանայելու օրենսդրական պահանջը՝ Բանկի բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովի 23.10.2025 թ. որոշմամբ հաստատված «Բաժնետերերի ընդհանուր ժողովի նախապատրաստման և վարման կանոնակարգը» վերանայվել է, և հաշվի առնելով վերջինիս խմբագրմանը հանգեցնող օրենսդրական փոփոխությունների բացակայությունը, Խորհրդի 25.05.2026 թ. որոշմամբ առաջարկվում է «Բաժնետերերի ընդհանուր ժողովի նախապատրաստման և վարման կանոնակարգը» թողնել անփոփոխ՝ այն հաստատելով 2-րդ խմբագրությամբ՝ REG 01.2 կոդավորմամբ:

ՀԱՐՑ 9. «ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ «Խորհրդի կանոնակարգը» 2-րդ խմբագրությամբ՝ REG 02.2 կոդավորմամբ հաստատելու մասին

Հիմք ընդունելով Բանկի ներքին իրավական ակտերը առնվազն տարին մեկ անգամ վերանայելու օրենսդրական պահանջը՝ Բանկի բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովի 23.10.2025 թ. որոշմամբ հաստատված «Խորհրդի կանոնակարգը» վերանայվել է, և հաշվի առնելով վերջինիս խմբագրմանը հանգեցնող օրենսդրական փոփոխությունների բացակայությունը, Խորհրդի 25.05.2026 թ. որոշմամբ առաջարկվում է «Խորհրդի կանոնակարգը» թողնել անփոփոխ՝ այն հաստատելով 2-րդ խմբագրությամբ՝ REG 02.2 կոդավորմամբ: